ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/07

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝

«Լինկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Մանուկյանի (լիազորագիր տրված՝ 24.01.2019թ.) և Ա. Պարանյանի (լիազորագիր տրված՝ 16.01.2019թ.)

ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչ՝ Ա. Ապերյանի (լիազորագիր տրված՝ 16.01.2019թ.)

ՈՒսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.01.2019թ. թիվ 26-3/242-19 գրությամբ «Լինկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 28.12.2018թ. թիվ ՄՄ/9518-18 գրության հիման վրա,

11.01.2019թ. թիվ 26-3/242-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Լինկ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Լինկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Լինկ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 22.01.2019թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը:

«2018թ. դեկտեմբերի 11-ին «Լինկ» ՍՊԸ-ի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության միջև կնքվել է հաշվապահական ծրագրի ներդրման ծառայությունների ձեռքբերման «ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/39-1-ՏԲ-60» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Լինկ» ՍՊԸ-ի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար ծառայությունների ձեռքբերման «ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/39-1-ՏԲ-60» ծածկագրով պայմանագիրը ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 24.12.2018թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի և 7.11 կետի ուժով:

Իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀօրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ընկերությունը հայտնել, որ 2018թ. դեկտեմբերի 11-ին «Լինկ» ՍՊԸ-ի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության միջև՝ հաշվապահական ծրագրի ներդրման

ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված «ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/39-1-ՏԲ-60» ծածկագրով պայմանագիրը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 24.12.2018թ. միակողմանի լուծվել է՝ պայմանագրի2.1.3 կետի «բ» ենթակետի և 7.11 կետի ուժով:

Համաձայն պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը, Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Իսկ պայմանագրի 7.11 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, ծառայության մատուցման ժամկետն է՝ 20.12.2018թ.:

Ընկերությունը հայտնել, որ «Լինկ» ՍՊԸ-ի կողմից հաշվապահական ծրագրի ներդրման ծառայությունների աշխատանքները ամբողջությամբ կատարվել են (համապատասխան ապացույցը կցվում է):

Համաձայն՝ 14.12.2018թ. ապրանքների հանձման-ընդունման ակտի, որը հաստատվել է մի կողմից «Լինկ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Հարությունյանի և մյուս կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցչի Տ. Այվազյանի կողմից:

Համաձայն վերոնշված հանձման-ընդունման ակտի՝

Կատարողի կողմից Պատվիրատուին տրամադրվել է ... Հաշվապահություն 8.3 (3 աշխատատեղ). ... Աշխատավարձ և կադրերի կառավարում (1 աշխատատեղ) և ... Հաշվապահություն 7.7 (1 աշխատատեղ) կոնֆուրացիաների հետ աշխատելու ցանցային պաշտպանության բանալի ....:

Պատվիրատուի կողմից Կատարողին վերադարձվել է ... Հաշվապահություն 7.7 և Աշխատավարձ և կադրերի կառավարում կոնֆիգուրացիաների հետ աշխատելու լոկալ պաշտպանության բանալի 1 աշխատատեղի համար:

Սակայն անհասկանալի պայմաններում հանձման-ընդունման ակտի ստորագրումից 10 օր անց ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 24.12.2018թ. միակողմանի լուծել է՝ պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի և 7.11 կետի ուժով՝ իբրև թե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Ընկերությունը նշել է, որ Պայմանագրի լուծման մասին տեղեկացվել և ծանոթացվել է 26.12.2018թ.-ին, իսկ արդեն 27.12.2018թ. Պատվիրատուին ներկայացրել է Ընկերության դիրքորոշումը պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ, մասնավորապես.

Ս./թ. նոյեմբերի 9-ին հրապարակված և 21-ին կայացած «ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար հաշվապահական ծրագրերի ձեռքբերում» (ծածկագիր՝ ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/39, գնորդ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն) էլեկտրոնային աճուրդի հաղթող է ճանաչվել «Լինկ» ՍՊԸ-ն, որի հետ 11.12.2018թ. կնքվել է թիվ ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/39-1 Պայմանագիրը, որը «Լինկ» ՍՊԸ-ն հաստատված ստացել է 12.12.2018թ.: Համաձայն Պայմանագրի, աշխատանքներն ավարտելու վերջնաժամկետ էր սահմանված 20.12.2018թ.:

14.12.2018թ. «Լինկ» ընկերության աշխատակցի կողմից Պատվիրատուի մոտ տեղադրվել է Պայմանագրով նախատեսված ծրագիրը և ներկայացվել է տեղադրման հանձնման-ընդունման ակտ: Պատվիրատուի SS պատասխանատու Տ. Այվազյանի կողմից այն ստորագրվել է, իսկ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ Է. Կարապետյանի կողմից մերժվել է՝ պատճառաբանությամբ, որ ծրագիրը նախատեսված է երեք աշխատատեղի համար, մինչդեռ իրենց անհրաժեշտ է ինը աշխատատեղ: Ընկերոյթունը նշել է, որ Պայմանագրի անբաժանելի մաս կազմող տեխնիկական բնութագրում և պահանջներում տեղերի քանակ նշված չի: Երեք աշխատատեղի տարբերակը «Լինկ» ընկերությունն ընտրել էր՝ ելնելով այն ինֆորմացիայից, որն ուներ Պատվիրատուի հաշվապահական գործող ծրագրի սպասարկման ընթացիկ աշխատանքներից, որը կատարվում էր Պատվիրատուի և Կատարողի միջև տվյալ պահի դրությամբ գործող համապատասխան

պայմանագրի համաձայն: Սպասարկվող այդ ծրագրի պարագայում Պատվիրատուի գործող լիցենզիաների թիվը երեքն էր:

18.12.2018թ. «Լինկ» ընկերության աշխատակիցը նորից գնացել է Պատվիրատուի մոտ՝ այս անգամ տեղադրելով ինը աշխատատեղի համար նախատեսված ծրագիրը: Սակայն ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ Է. Կարապետյանը կրկին հրաժարվել է ստորագրել հանձնման-ընդունման ակտը՝ այս անգամ պատճառաբանելով, որ իրենց անհրաժեշտ է տաս աշխատատեղ: Նման անպատասխանատու վերաբերմունքն առնվազն տարակուսանքի տեղիք է տալիս և խոչընդոտում է պայմանագրով սահմանված երկկողմ պարտավորությունների պատշաճ կատարումը:

Արդյունքում՝ «Լինկ» ընկերությունը չստանալով ծրագրի Պատվիրատուին հանձնելու ստորագրված ակտը, սահմանված ժամկետում չկարողացավ ներկայացնել հանձնման-ընդունման արձանագրությունը՝ համաձայն Պայմանագրի 3.1 կետի:

26.12.2018թ. նախարարության Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Մ. Մանասյանից, Է. Կարապետյանի զեկուցագրի հիման վրա, «Լինկ» ընկերությունն ստացավ նամակ, որով ընկերությանը տեղեկացնում էին, որ ծառայության մատուցման ժամկետը խախտելու և Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքերով (Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետ և 7.11 կետ) միակողմանի լուծում են Պայմանագիրը՝ սույնով պարտադրելով «Լինկ» ՍՊԸ-ին տուժանքի տեսքով վճարել Պայմանագրի ապահովման գումարը:

Համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի (տեխնիկական բնութագրի), «Լինկ» ընկերությունը մատակարարել և տեղադրել է համապատասխան նկարագրությունով համակարգը 14 դեկտեմբերի 2018թ., որը Պատվիրատուն, առարկություններ չունենալու դեպքում, պարտավոր էր ընդունել մինչև 20-ը դեկտեմբերի 2018 և ստորագրել պայմանագրով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը: Սակայն իր անգործության, պարտավորությունների իր մասի կատարումը չհիմնավորված ձգձգելու պատճառով Պատվիրատուն անհնարին դարձրեց «Լինկ» ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ժամկետներում փաստաթղթային առումով ավարտել իր պարտականությունների կատարումը:

Ընկերությունը նշել, որ իրենց նախաձեռնությամբ ծրագրի տեղադրմանը զուգահեռ Է. Կարապետյանի հետ փորձ է արվել համաձայնեցնել վերջինիս անձնակազմին ծրագրին ծանոթացնելու համար անհրաժեշտ դասընթացներ կազմակերպելու հարցը ընկերության տարածքում, մի բան, որը նախատեսված չէր Պայմանագրով, սակայն գիտակցելով, որ առանց դասընթացների դժվար կլիներ իրականացնել նմանատիպ համակարգի շահագործումը, «Լինկ» ընկերությունը դարձյալ դրսևորեց բարի կամք, ինչպես և այն դեպքում, երբ երեք աշխատատեղը փոխարինեց իննով: Ընկերությունը՝ ընդառաջելով Պատվիրատուին, 17.12.2018թ. համաձայնվեց դասընթացներն անցկացնել Պատվիրատուի տարածքում: Սակայն Պատվիրատուն չկարողացավ կամ չցանկացավ ապահովել անհրաժեշտ պայմանները դասընթաց անցկացնելու համար, պատճառաբանելով, որ ազատ դահլիճ կամ որևէ այլ սենյակ չունեն և ժամանակ էլ չունեն: Դահլիճի և ժամանակի որոնումները «շարունակվեցին» մինչև 24.12.2018թ., երբ մեր ընկերությանը հեռախոսով տեղեկացրին, որ ցանկանում են միակողմանի լուծել վերը նշված Պայմանագիրը:

Ընկերությունը հայտնել է, որ «Լինկ» ՍՊԸ-ն շուկայում է շուրջ քսան տարի, և իրենց փորձը հուշում է Պատվիրատուի նման վարքագծի շարժառիթների հնարավոր պատճառների մասին: Ընկերությունը նշել է, որ այդ փորձն այլևս անիմաստ է դառնել, սակայն բացառելու համար կոռուպցիոն ռիսկերը, խնդրել է խորամուխ լինել այս խնդրին և պարզաբանել կատարվածը, ինչպես նաև վերականգնել Ընկերության կրած վնասները:

Ընկերությունը նշել է, որ կից ներկայացնում ենք SS պատասխանատուների կողմից համակարգի տեղադրման հանձնման-ընդունման ակտը՝ երկկողմ ստորագրություններով /կցվում է/:

Պայմանագրի անբաժանելի մաս կազմող տեխնիկական բնութագրում՝ տեղերի քանակ նշված չի եղել:

Երեք աշխատատեղի տարբերակը «Լինկ» ընկերությունն ընտրել է Պատվիրատուի հաշվապահական գործող ծրագրի սպասարկման ընթացիկ աշխատանքներից, որը կատարվում էր Պատվիրատուի և Կատարողի միջև տվյալ պահի դրությամբ գործող համապատասխան պայմանագրի համաձայն և հատկանշական է այն փաստը, որ

սպասարկվող այդ ծրագրի պարագայում Պատվիրատուի գործող լիցենզիաների թիվը երեքն էր:

Չնայած պայմանագրի շրջանակներում նախատեսված չի եղել 9 աշխատատեղի համար նախատեսված ծրագիր Ընկերությունը ցուցաբերել է բարեխիղճ դրսևորում և 18.12.2018թ. «Լինկ» ընկերության աշխատակիցը նորից գնացել է Պատվիրատուի մոտ՝ այս անգամ տեղադրելով իննը աշխատատեղի համար նախատեսված ծրագիրը: Սակայն ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ Է. Կարապետյանը կրկին հրաժարվել է ստորագրել հանձնման-ընդունման ակտը, այս անգամ պատճառաբանելով, որ իրենց անհրաժեշտ է արդեն տաս աշխատատեղ:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն դրսևորել է իրեն որպես անպատասխանատու գործընկեր, որի անպատասխանատու քայլերը խոչընդոտ են հանդիսացել «գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառվելու փաստի առաջ:

Արդյունքում՝ ստեղծվել է մի իրավիճակ, որի արդյունքում «Լինկ» ՍՊԸ-ն չստանալով ծրագրի Պատվիրատուին հանձնելու ստորագրված ակտը, սահմանված ժամկետում չկարողացավ ներկայացնել հանձնման-ընդունման արձանագրությունը՝ համաձայն Պայմանագրի 3.1 կետի:

Պայմանագրի միակողմանի լուծման հիմք հանդիսացած 2.1.3 կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը, Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Ընկերությունը խնդրել է նկատի ունենալ, որ «ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/39-1-ՏԲ-60» ծածկագրով պայմանագրի շրջանակներում՝ «Լինկ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է 14.12.2018թ. արդեն իսկ հանձնել է պայմանագրով նախատեսված աշխատանքները, ինչը հաստատվում է նաև հանձման-ընդունման ակտով, սակայն հետագայում Պատվիրատուի կողմից պարտադրվել է իրականացնել այնպիսի աշխատանքներ, որոնք պայմանագրով նախատեսված չեն եղել և արդյունքում այդ

պայմանագրով չնախատեսված աշխատանքների մասով էլ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 24.12.2018թ. միակողմանի լուծել է պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և «Լինկ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 17.01.2019թ. ժամը 11:00-ին և 24.01.2019թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 24.01.2019թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.12.2018թ. թիվ ՄՄ/9518-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Լինկ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված N ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/39-1-ՏԲ-60 ծածկագրով պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ կազմակերպությունը պարտավորվել է նախարարությանը մատուցել հաշվապահական ծրագրի ներդրման ծառայություններ /այսուհետ՝ ծառայություններ/: Պայմանագրի N 1 հավելվածի համաձայն ծառայությունների մատուցման վերջնաժամկետ է սահմանվել 2018 թվականի դեկտեմբերի 20-ը:

Պայմանագրի 3.1 կետի համաձայն, մատուցվող ծառայությունն ընդունվում է պատվիրատուի և կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

պատվիրատուի և կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերության կողմից վերը նշված փաստաթղթերը չեն տրամադրվել և պայմանագրով նախատեսված ծառայությունները սահմանված ժամկետում չեն մատուցվել նախարարությանը: Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը և 7.11 կետը՝ նախարարությունը 2018 թվականի դեկտեմբերի 26-ից միակողմանի ամբողջությամբ լուծել է պայմանագիրը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 17.01.2019թ. ժամը 11:00-ին և 24.01.2019թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 24.01.2019թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2019/07 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2019/07 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Լինկ» ՍՊԸ-ի միջև 2018թ. դեկտեմբերի 11-ին կնքվել է հաշվապահական ծրագրերի ներդրման ծառայությունների ձեռքբերման «ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/39-1-ՏԲ-60» ծածկագրով պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետով սահմանվել է, որ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Լինկ» ՍՊԸ-ն) ստանձնում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար հաշվապահական ծրագրերի ներդրման ծառայությունների ձեռքբերման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. Նույն կետի 1.2 ենթակետով սահմանվել է, որ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. Պայմանագրի 2.1.3. կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

4. Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ ծառայության մատուցման ժամկետն է՝ 20.12.2018թ.:

5. Պայմանագրի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

6. Պայմանագրի 7.11 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7. Ընկերությանն ուղղված 24.12.2018թ. թիվ ՄՄ/9407-18 գրությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հայտնել է, որ «ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Լինկ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված N ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/39-1-ՏԲ-60 ծածկագրով պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ կազմակերպությունը պարտավորվել է նախարարությանը մատուցել հաշվապահական ծրագրի ներդրման ծառայություններ /այսուհետ՝ ծառայություններ/: Պայմանագրի N 1

հավելվածի համաձայն ծառայությունների մատուցման վերջնաժամկետ է սահմանվել 2018 թվականի դեկտեմբերի 20-ը:

Պայմանագրի 3.1 կետի համաձայն, մատուցվող ծառայությունն ընդունվում է պատվիրատուի և կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է պատվիրատուի և կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերության կողմից վերը նշված փաստաթղթերը չեն տրամադրվել և պայմանագրով նախատեսված ծառայությունները սահմանված ժամկետում չեն մատուցվել նախարարությանը, ուստի հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը և 7.11 կետը՝ նախարարությունը 2018 թվականի դեկտեմբերի 26-ից միակողմանի ամբողջությամբ լուծել է պայմանագիրը:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.01.2019թ. թիվ 26-3/242-19 գրությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության 28.12.2018թ. թիվ ՄՄ/9518-18 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Լինկ» ՍՊԸ-ի 22.01.2019թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Լինկ» ՍՊԸ-ի միջև 2018թ. դեկտեմբերի 11-ին կնքվել է հաշվապահական ծրագրերի ներդրման ծառայությունների ձեռքբերման «ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/39-1-ՏԲ-60» ծածկագրով պայմանագիր, որի 1-ին կետի

1.1 ենթակետով սահմանվել է, որ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Լինկ» ՍՊԸ-ն) ստանձնում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար հաշվապահական ծրագրերի ներդրման ծառայությունների ձեռքբերման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան և սահմանված ժամկետներով:

Նույն կետի 1.2 ենթակետով սահմանվել է, որ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3. կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ ծառայության մատուցման ժամկետն է՝ 20.12.2018թ.:

Պայմանագրի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրի 7.11 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ընկերությանն ուղղված 24.12.2018թ. թիվ ՄՄ/9407-18 գրությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հայտնել է, որ «ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Լինկ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված N ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/39-1-ՏԲ-60 ծածկագրով պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է նախարարությանը մատուցել հաշվապահական ծրագրի ներդրման ծառայություններ /այսուհետ՝ ծառայություններ/: Պայմանագրի N 1 հավելվածի համաձայն ծառայությունների մատուցման վերջնաժամկետ է սահմանվել 2018 թվականի դեկտեմբերի 20-ը:

Պայմանագրի 3.1 կետի համաձայն, մատուցվող ծառայությունն ընդունվում է պատվիրատուի և կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է պատվիրատուի և կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերության կողմից վերը նշված փաստաթղթերը չեն տրամադրվել և պայմանագրով նախատեսված ծառայությունը սահմանված ժամկետում չի մատուցվել նախարարությանը, ուստի հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը և 7.11 կետը՝ նախարարությունը 2018 թվականի դեկտեմբերի 26-ից միակողմանի ամբողջությամբ լուծել է պայմանագիրը:

Այսպիսով ուսումնասիրելով 24.12.2018թ. թիվ ՄՄ/9407-18 գրությամբ Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման հիմքը, այն է՝ «Լինկ» ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուին չի տրամադրվել վերջինիս կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, ինչպես նաև պայմանագրով նախատեսված ծառայությունը սահմանված ժամկետում չի մատուցվել Պատվիրատուին, որի հիման վրա Պատվիրատուն, հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետը և 7.11 կետը՝ միակողմանի ամբողջությամբ լուծել է պայմանագիրը, հայտնում եմ հետևյալը.

Պայմանագրի 2.1.3. կետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է***

պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

ՍՑ-ԱՄ-2019/07 ընթացակարգի շրջանակներում Ընկերության ներկայացուցիչները հայտնել են, որ Պայմանագրի շրջանակներում «Լինկ» ՍՊԸ-ի կողմից հաշվապահական ծրագրի ներդրման ծառայությունները ամբողջությամբ մատուցվել են Պատվիրատուին՝ ներկայացնելով համապատասխան ապացույցը, համաձայն որի 14.12.2018թ. ապրանքների հանձնման-ընդունման ակտը հաստատվել է մի կողմից «Լինկ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Հարությունյանի և մյուս կողմից՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչ Տ. Այվազյանի կողմից, սակայն հետագայում Պատվիրատուի կողմից պարտադրվել է իրականացնել այնպիսի աշխատանքներ, որոնք պայմանագրով նախատեսված չեն եղել և արդյունքում այդ պայմանագրով չնախատեսված աշխատանքների մասով էլ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 24.12.2018թ. միակողմանի լուծել է պայմանագիրը

Միաժամանակ արձանագրում եմ, որ Պատվիրատուի ներկայացուցիչը փաստել է այն, որ 14.12.2018թ. երկկողմ հաստատված ապրանքների հանձման-ընդունման ակտը ստորագրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցչի կողմից:

Այսպիսով՝ Պայմանագրի 3.1 կետի համաձայն, մատուցվող ծառայությունն ընդունվում է պատվիրատուի և կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է պատվիրատուի և կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Պայմանագրի միակողմանի լուծման հիմք հանդիսացած 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը, Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Համաձայն՝ Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, ծառայության մատուցման ժամկետն է՝ 20.12.2018թ.:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Լինկ» ՍՊԸ-ն ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Լինկ» ՍՊԸ-ի միջև 2018թ. դեկտեմբերի 11-ին կնքված «ՀՀ ԳՆ-ԳՀԾՁԲ-18/39-1-ՏԲ-60» ծածկագրով պայմանագրի շրջանակներում սահմանված ժամկետում մատուցել է պայմանագրով նախատեսված ծառայությունը, ինչը հաստատվում է 14.12.2018թ. «Լինկ» ՍՊԸ-ի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցչի կողմից ստորագրված ապրանքների հանձնման-ընդունման ակտով, ուստի նման փաստական հանգամանքներով պայմանավորված, գտնում եմ, որ «Լինկ» ՍՊԸ-ն թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, հետևաբար «Լինկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.01.2019թ. թիվ 26-3/242-19 գրությամբ «Լինկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ